ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1597-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	**Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացությունը**	**Կատարված փոփոխությունը**
1.	2.	3.	4.	5.
1.	Արդարադատության ակադեմիա 03.05.2018թ. գրություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն: Գրավոր քննության հարցերը մշակողը վարձատրվում է Կառավարության սահմանած չափով և կարգով»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի համաձայն՝ գրավոր քննության հարցերը մշակելու համար կարող են ընտրվել ինչպես համապատասխան մասնագետներ, այնպես էլ մասնագիտացված	Ընդունվել է ի գիտություն:	Նախագծով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքին համահունչ, սահմանվում է, որ վճարումը կատարվում է որակավորման գրավոր քննության հարցերը մշակողին: Ամրագրված կարգավորման պայմաններում բացակայում է որակավորման գրավոր քննության հարցերը մշակողների վերաբերյալ դատական օրենսգրքի դրույթների վերարտադրման անհրաժեշտությունը:

		կազմակերպություններ՝ կարծում ենք, որոշմամբ անհրաժեշտ է հստակեցնել, որ վճարումը կատարվում է այն մասնագետին կամ մասնագիտացված կազմակերպությանը, որն ընտրվել է ԲԴԽ կողմից:		
2.	Ֆինանսների նախարարություն 05.05.2018թ. թիվ 01/8-2/8081-18 գրություն	Նախագծի 1-ին կետով նախատեսվող՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության հարցերի մեկ տարբերակի մշակման դիմաց 50000 դրամի չափով վարձատրություն սահմանելը լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն ունի: Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված նախագծի ընդունումը կառաջացնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտություն, որը հնարավոր չէ գնահատել համապատասխան տվյալների բացակայության պատճառով:	Ընդունվել է ի գիտություն:	Նախագծի ընդունման հիմնավորման մեջ արտացոլված է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության հարցերի մեկ տարբերակի մշակման դիմաց 50000 դրամի չափով վարձատրություն սահմանելու հիմնավորումը, ինչը բխեցվել է ձևավորված իրավակիրառ պրակտիկայից: Ուշագրավ է, որ դատական իշխանությունը նախագծի այս կարգավորման վերաբերյալ հայտնել է իր համաձայնությունը՝ չներկայացնելով դիտողություն կամ առաջարկություն:
3.	Պետական եկամուտների կոմիտե 11.05.2018թ. թիվ 01/3-1/24199-18 գրություն	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետը՝ նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը: Ուստի առաջարկում ենք Նախագծի վերնագրում «կարգը սահմանելու» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1597-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» բառերով:		
4.	Բարձրագույն դատական խորհուրդ 24.05.2018թ. թիվ Ե-3734 գրություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրավոր քննություն անցկացնելու օրվանից առնվազն 10 օր առաջ Դատական դեպարտամենտը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ: Ելնելով վերոգրյալ իրավակարգավորումից՝ անհրաժեշտ է հստակեցնել, թե ներկայացված նախագծի 1-ին կետի կարգավորումը որքանով է վերաբերում նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված գրավոր քննության հարցերի նմուշօրինակի մշակման համար նախատեսված վարձատրությանը:	Ընդունվել է ի գիտություն:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 2-ր մասից ուղղակիորեն բխում է, որ համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է գրավոր քննության հարցեր մշակելու համար և Կառավարության սահմանած չափով և կարգով վարձատրվում է գրավոր քննության հարցերը մշակողը: Հետևաբար, այս նախագծի շրջանակներում նման հստակեցումների հնարավորությունը բացակայում է: